ՀՏԴ 94 (479. 24 : 32) *Պատմություն*

Էդ. Գ. Մինասյան,
պատմական գիտությունների դոկտոր,
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան,

ՍՈՒՄԳԱՅԻԹԻ և ԲԱՔՎԻ ՋԱՐԴԵՐԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՅԵՂԱՍՊԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Փաստացի նյութի հիման վրա հոդվածում ներկայացվում է 1988-1990թթ. Սումգայիթի և Բաքվի կոտորածների կոտորածների ժամանակագրությունը և դրանց պատճառները: Մատնանշվում է, որ նրանք Ադրբեջանի ղեկավար շրջանների հայերի նկատմամբ ազգայնական քաղաքականության հետևանքն են: Հեղինակը եզրակացնում է, որ Սումգայիթի ու Բաքվի կոտորածները փաստորեն 20-րդ դարի սկզբին Թուրքիայում արևմտահայերի ցեղասպանության շարունակությունն են և որ նման քաղաքականությունը Ադրբեջանը հաջորդականորեն է իրականացնում: Անհրաժեշտ է, որպեսզի միջազգային հանրությունը դատապարտի Ադրբեջանի ցեղասպան քաղաքականությունը և պատասխանության կանչի նրան:

Բանալի բառեր *– Սումգաիթ, ոճրագործություն, Ադրբեջան, վայրագություն, զոհ, վերակառուցում, անպատժելիություն, Ազգային խորհուրդ, բարբարոսություններ, Գերագույն խորհուրդ, օրենսդրություն, ազգային խորհուրդ, գազազած ամբոխ:*

Э. Минасян, д.и.н., ЕГУ

ПОГРОМЫ В СУМГАИТЕ И БАКУ, ГЕНОЦИДАЛЬНАЯ ГОСУДАРСТВЕННАЯ ПОЛИТИКА АЗЕРБАЙДЖАНА

На основе фактического материала в статье представлены хронология погромов армян в Сумгауте и Баку в 1988 г. и 1990 г. и их причины. Показано, что они явились следствием националистической политики официальных кругов Азербайджана по отношению к армянам. Автор приходит к заключению, что сумгаитские и бакинские погромы не что иное, как продолжение геноцида восточных армян, организованного в Турции в Хачале 20 века и что в Азербайджане подобная политика являлась преемственной. Необходимо, чтобы международная общественность осудила геноцидную политикы Азербайджана и призвала его к ответу.

Ключевые слова*: сумгаит, преступность, Азербайджан, зверство, жертва, реконструкция, безнаказанность, Национальный совет, варварство, Верховный Совет, законодательство, Национальный совет*

E. Minasyan, Ph.D., YSU

SUMGAYIT AND BAGU POGROMS, GENOCIDAL STATE POLICY OF AZERBAIJAN

The article presents a factological base witnessing of Armenian Sumgayit and Bagu pogroms and their underlyings. It is shown that they are consequence of nationalistic policy of official circles of Azerbaijan towards Armenians. The conclusion states that Armenian Sumgayit and Bagu pogroms actually are the continuation of Turkish genocide of Armenians at the beginning of the 20th century and that this policy of Azerbaijan is successive. The international community is to condemn genocidal policy of Azerbaijan and call Azerbaijan for responsibility.

Keywords*: Sumgait, crime, Azerbaijan, atrocity, victim, reconstruction, impunity, National Council, barbarism, Supreme Council, legislation, National Council*

30 տարի առաջ՝ 1988 թ., Սումգաիթում փետրվարի 27-ից 29-ը և 1990 թ. հունվարի 13-ից մինչև 20-ը Սումգայիթում և Բաքվում տեղի ունեցան հայերի զանգվածային ջարդերն ու տեղահանումները՝ ի պատասխան Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման պահանջի: Դա Ադրբեջանի իշխանությունների և «ժողովրդական ճակատի» կողմից ի սկզբանե որդեգրված ուժային և էթնիկական զտումների քաղաքականությունն էր, ցեղասպանության հերթական հրեշավոր դրսևորում, պանթուրքիզմի՝ թուրքական ազգային գաղափարախոսության

ճանապարհին: Դրա արդյունքը եղավ ոչ միայն Բաքվում 252 հազարանոց հայկական համայնքի վերացումը, Ադրբեջանի շուրջ 400 հազար հայերի բռնի տեղահանումը, այլև ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի հասարակության դեմ լայնածավալ ռազմական ագրեսիան, որը հանգեցրեց ծանր մարդկային և նյութական կորուստների: Այն փաստը, որ Ադրբեջանն իր պատասխանատվությունն ու մեղքը կատարված հանցագործությունների և սանձազերծված ագրեսիայի հետևանքների համար ընդունելու փոխարեն շարունակում է հակահայկական տենդային գործունեությունը, ուժային դիրքերից սպառնալիքները, վկայում է, որ Բաքուն առ այսօր շարունակում է վտանգ ներկայացնել ոչ միայն իր իսկ բնակչության, այլև ողջ տարածաշրջանի համար: Դրա հիմնական պատճառն այն է, որ Բաքվի հրեշավոր ոճրագործությանը առայժմ ո՛չ քաղաքական, ո՛չ իրավական, ո՛չ բարոյական գնահատական չի տրվել[1]: Անգամ զղջումի որևէ նշույլի բացակայությունը, ավելին, հայ ժողովրդի հանդեպ աճող սպառնալիքները հաստատում են, որ «բաքուները», «սումգայիթները», «կիրովաբադները» դեռևս մնում են Ադրբեջանի պաշտոնական քաղաքականության օրակարգում: Եվ այս ամենը կատարվում է միջազգային հանրության աչքի առաջ, որն ըստ ամենայնի չի պատրաստվում դասեր քաղել անցյալից, չէ որ հենց միջազգային հանրության թողտվությամբ է հնարավոր դարձել արյունալի խրախճանքը, որը համակել էր Խորհրդային Ադրբեջանի ամբողջ տարածքը և Բաքվում իր գագաթնակետին էր հասել 1990 թ. հունվարին[2]: Նշվում է, որ Բաքվում հայերի ջարդերը դարձան «ինտերնացիոնալ» համարվող ադրբեջանական մեկ այլ քաղաքի՝ Սումգայիթի, ուր ապրում էր 18 հազար հայ, 1988թ. փետրվարին հայերի կոտորածների անմիջական շարունակությունը: Անպատիժ չարիքը կրկնվեց՝ ընդլայնելով իր մասշտաբները: 1990թ. հունվարի 13-ից 19-ը մարդկանց դեմ ամենադաժան պատժամիջոցների կիրառմամբ Բաքվի հայերից Ադրբեջանի մայրաքաղաքը էթնիկ զտելու հարցում: Բաքվի հազարավոր հայեր զոհվեցին, հաշմանդամ դարձան, հարյուր հազարավորները՝ փախստական: Հիրավի, ֆաշիստական վայրագություններին զոհ գնացին հիմնականում երեխաներ, ծերեր, կանայք: Խորհրդային կենտրոնական իշխանությունների թույլտվությամբ, խորհրդային Ադրբեջանի ղեկավարության թույլտվությամբ, լուռ համաձայնությամբ հայոց հարցը լուծվեց թուրքական փորձված գործիքի՝ ցեսասպանության միջոցով: Եվ եթե Սումգայիթում խորհրդային զորքերը «ուշացան» 3 օրով, ապա Բաքվում մի ամբողջ շաբաթով՝ քաղաք մտնելով միայն այն ժամանակ, երբ այնտեղ գրեթե հայ չէր մնացել[3]:

Վերակառուցման շրջանի առաջին զոհերը եղան ղարաբաղյան շարժման նախաձեռնողները: Այդ ընթացքում իրականացվող վերը նշված ցեղասպանությունները, որոնք ոչ թե պատահականություններ էին, այլ պետական քաղաքականության և Ադրբեջանի ղեկավարության հանցավոր գործողության հետևանք: Այնինչ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա պատժի մասին» 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայով նախատեսվում է խստագույն պատասխանատվություն: Դեռ 1988թ. փետրվարի 26-ին, մինչև Սումգայիթյան ջարդերը, հայ գրողներ՝ Ս. Կապուտիկյանը և Զ. Բալայանը հայ ժողովրդի անունից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Գորբաչովի առջև բարձրացրին Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման և անկախության իրավունքի հիմնախնդիրը: Այդ առթիվ նրա պատասխանը՝ («Իսկ դուք մտածե՞լ եք Բաքվում ապրող 270 հազ. հայերի բախտի մասին»), վկայում է, որ նա լավատեղյակ էր հայերի դեմ կազմակերպվող ցեղասպանությանը[4]: Տեղյակ էր ու ոչ մի կանխարգելիչ միջոցների չդիմեց: Եվ մի երկու օր հետո հայերի կոտորածներ տեղի ունեցան Ադրբեջանում: Մինչ այդ, երբ փետրվարի 14-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ առաջին ցույցը, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի բաժնի վարիչ Ասայովը ահաբեկիչ հայտարարություն էր արել, թե հարյուր հազար ադրբեջանցիներ պատրաստ են ցանկացած ժամանակ ներխուժել Ղարաբաղ և ջարդ տալ:

Սումգայիթյան ցեղասպանության նման Բաքվի ջարդերը ևս կազմակերպված էին և նպատակ էին հետապնդում ահաբեկել հայերին ու հարկադրել՝ հրաժարվելու իրենց սահմանադրական, օրինական պահանջներից, նրանց դուրս վռնդել ոչ միայն Բաքվից, այլ նաև

[1] Տես Аннексия и Депортация, М., 1998, с 10.

[2] Տես «Հայաստանի Հանրապետություն», 14 հունվարի, 2010 թ., էջ 3:

[3] Տես նույն տեղում:

[4] Տես Ի. Ա. Արաբյան, Ցողասպանությունը և դրա պատժելիությունը (պատմության էջեր, երեկ և այսօր), Երևան, 1996 թ., էջ 55:

ընդհանրապես Ղարաբաղից[1]: Այդ օրերի Ադրբեջանի շատ ղեկավարների կարգախոսն էր՝ «մահ հայերին»: Եթե նախապատրաստված միջոցներով սումգայիթյան ջարդն սկսվեց 1988 թ. փետրվարի 27-ի գիշերը և շարունակվեց երկու օր ևս, ապա Բաքվի ջարդերը սկսվեցին 1990թ. հունվարի 13-ին և շարունակվեցին 7 օր անընդհատ: Երկու դեպքում էլ հայերի ջարդի նախապատրաստված լինելը երևում է նրանից, որ բոլոր բնակկառավարչություններին վաղօրոք կարգադրված էր կազմել հայ բնակիչների ցուցակը, արգելել հայերին աշխատանքի գնալ: Եթե Սումգայիթում դա արվեց փետրվարի 28-ից սկսած, ապա Բաքվում դեռևս 1989թ. դեկտեմբերի 25-ից սկսած: Այդ օրը ծայրահեղականները այրեցին Բաքվի հայոց եկեղեցին, նրանց հաջողվեց վերջին հայերին ազատել տալ աշխատանքից: Առավել անհնազանդ կամ դանդաղաշարժ ղեկավարների ազգանունները, որոնք մտածված կամ ակամա չէին կատարում այդ կարևորագույն պահանջը, փակցվում էին հատուկ ցուցատախտակներին՝ լեյտենանտ Շմիդտի փողոցում գտնվող ժողովրդական ճակատի պաշտոնական նստավայրի առջև: Ինչպես նաև այն հարյուրավոր հայերի ազգանունները, որոնք դեռ շարունակում էին աշխատել Ադրբեջանի կոմկուսի կենտկոմում, հանրապետության ՊԱԿ-ի համակարգում գտնվող մի շարք հաստատություններում[2]: Երկու դեպքում էլ հայերին արտաքսելու և բնաջնջելու կոչերն ահագնացան այն բանից հետո, երբ առանձնացվեցին հայերի հասցեները և ճշտվեց այն ժամանակահատվածը, երբ սկսելու էին ցեղասպանությունը: Կանխամտածված ու ծրագրված հայասպանության համար նախապատրաստել էին բոլոր միջոցները (երկաթե ձողեր, քարակույտեր), ստեղծել էին հանցագործության, հանցավորների ու հանցակիցների քողարկման պայմաններ ու հոգեբանական տրամադրվածության վիճակ, գործելու համար մթնոլորտ: Ըստ պաշտոնական հաղորդումների՝ Սումգայիթում ցեղասպանության հետևանքով զոհվել է 32 հայ, այնինչ իրականում դիարաններում այդ օրերին գրանցվել է 115 դիակ: Ըստ փաստական տվյալների՝ զոհվել է 100 մարդ[3]: Միայն 3 անձի վերաբերյալ գործը հանձնվեց ԽՍՀՄ գերագույն դատարան: 1988թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին դատավարության ընթացքում ապացուցվեց, որ ոճրագործ ոմն Ա. Ախմեդով, որը գլխավորում էր 41ա թաղամասի հայերի կոտորածը, փետրվարի 29-ին մի ձեռքին բռնել է կացին, իսկ մյուսում բարձրախոս և անընդհատ կոչել է՝ բղավելով: «Մուսուլմաններ ցույց տվեք հայերի տները, որտե՞ղ են նրանք ապրում», «Մահ հայերին»: Նրա դրդմամբ առանձնակի դաժանությամբ սպանվել է 7 հայ, քարուքանդ են արվել հայերի բազմաթիվ բնակարաններ, ոչնչացվել կամ յուրացվել է նրանց գույքը: Ընդհանուր նյութական վնասը հաշվարկվեց 216 հազար ռուբլի[4]: Վկաների ցուցմունքներով մերկացվեցին նրանց ոճրագործությունները: Թվում էր, թե հրապարակայնորեն կդատապարտվեին ոճրագործ ցեղասպանները, այնինչ 94 մեղադրյալների վերաբերյալ 30 քրեական գործերը մնացին անորոշ մշուշի մեջ և հռչակված հրապարակայնության ու ժողովրդավարության պայմաններում Մոսկվայում քննվել է ընդամենը 1 գործ: Զոհվածների հարազատների և փաստաբանների կողմից խնդիր դրվեց բոլոր գործերը միացնել, ուղարկել լրացուցիչ քննության՝ մերկացնելու համար ցեղասպանության կազմակերպիչներին, ղեկավարներին, հրահրողներին: Դատարանը միայն մեկին դատապարտեց մահվան, իսկ մնացած գործերի ճակատագիրն առ այսօր հայտնի չէ: Փաստորեն Ադրբեջանի Հանրապետության պետական, կուսակցական, ազգայնամոլ որևէ գործիչ՝ լինի նա Ալիևը, Իսկենդերովը, Կևորկովը, Սուլեյմանովը, Ուլիևը, Մամեդովը, Վեզիրովը թե Բունիաթովը, քրեական կարգով դատական պատասխանատվության չենթարկվեց: ՄԱԿ-ի դրույթները չեն կիրառվել ու չեն կիրառվում ԼՂՀՄ-ում, Բաքվում և այլուր հայ բնակչության նկատմամբ թույլ տված հանցավոր գործողությունների համար: Դրա պատճառով էլ ստեղծվել է անպատժելիության, սանձարձակության մթնոլորտը: Միայն հայ լինելու համար Բաքվում սպանվեցին 200-ից ավելի հայեր[5]: Որոշ տվյալներով 150-300, իսկ մեկ այլ աղբյուրի համաձայն հունվարյան ջարդի օրերին Բաքվում զոհվել է 1000 մարդ[6]: Այս տվյալները մոտավոր են: Բաքվում հետապնդումների ժամանակ սպանվածների հստակ թիվն այդպես էլ հայտնի չեղավ, քանի որ այդ կապակցությամբ դատական որևէ ուսումնասիրություն չի իրականացվել: Կան առանձնակի

[1] Տես Հարությունյան Բ., «Ոչինչ չի մոռացվել», «Երևանի համալսարան», 30.04.1993:
[2] Տես Ի. Մոսեսովա, Ա. Հովնանյան, Բաքվի ջարդերը, Երևան, 1992, էջ 15:
[3] Տես Сумгаит ... Геноцид ... гласность ? ... Ереван, 1989, с. 55:
[4] Տես Ի. Ա. Արաբյան, նշված աշխատությունը, էջ 55:
[5] Տես Аннексия и Депортация, с. 11:
[6] Տես «Առավոտ», 14.01.2010 թ., էջ 7:

վայրագությամբ իրագործվող սպանությունների բազմաթիվ վկայություններ (օրինակ՝ զոհերի կենդանի հրկիզում): Այն ադրբեջանցիները կամ այլ ազգությունների ներկայացուցիչները, որոնք փորձում էին օգնել հայերին, վտանգում էին իրենց կյանքը: Բաքվում հայերի նկատմամբ իրագործված ջարդերի վերաբերյալ գործի քննություն չկատարվեց: Ինչպես Սումգայիթի դեպքում, Մոսկվան չցանկացավ բացահայտել սպանդի ու ջարդի կազմակերպիչներին ու ոգևորողներին: Ադրբեջանում սպանված ջարդարարները հայտարարվեցին «ազգային հերոսներ» և տեղ գտան «Եղբայրական գերեզմանոցում»: ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Սուխարևը լռությամբ պաշտպանեց Բաքվում կատարված վանդալիզմը: Ադրբեջանական ազգայնամոլ տարրերը 1990թ. հունվար ամսին սկսեցին նոր բարբարոսություններ: Դեռևս 1989 թ. դեկտեմբերի 30-ի միտինգում հնչեցին կոչեր հայերին բնաջնջելու վերաբերյալ, ինչպես նաև Իրանի հետ սահմանը քանդելու և Արաքսի այն ափին բնակվող եղբայրներին միանալու մասին, ինչն արվեց հաջորդ 3 օրերին: Փաստը ավելի ուշ հաստատեց ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար՝ Միխայիլ Գորբաչովը. «Ադրբեջանի ծայրահեղական ուժերի գործողությունները ստանում էին ավելի ու ավելի բացահայտ հակապետական, հակասահմանադրական բնույթ: Իրադարձությունները Բաքվում դարձել էին անկառավարելի, Գերագույն խորհուրդը՝ և ԽՄԿԿ-ն կաթվածահար էին, քանդվել էր 200 կմ Իրանի հետ խորհրդային պետական սահմանը, հարձակումներ էին կատարվում տեղական մարմինների վրա: Ես շտապ Բաքու գործուղեցի Եվգենի Պրիմակովին և Անդրեյ Գիրենկոյին, ովքեր առաջարկեցին արտակարգ իրավիճակ հայտարարել ու զորքեր մտցնել: Այժմ էլ համարում եմ, որ դրանով կանխվեց ավելի մեծ արյունահեղությունը»[1]: Դեռևս Բաքվում հայերի ու մյուս ազգությունների ներկայացուցիչների կոտորածը սկսվելուց 4 օր առաջ Հայաստանի Գերագույն խորհուրդը դիմել էր Մ. Գորբաչովին և նրան տեղյակ պահել, որ Բաքվում, Շահումյանի և Խանլարի շրջաններում, Գետաշենում և այլ տեղերում ստեղծվել է արտակարգ իրադրություն: Տեղի են ունենում սպանություններ, հրկիզումներ, շրջափակվում են ճանապարհները, կամուրջները, առևանգվում են պատանդներ: Հայաստանի Գերագույն խորհուրդը Մ. Գորբաչովից խնդրում էր «Անհապաղ միջոցներ ձեռնարկել ապահովելու հայ բնակչության անվտանգությանը և դադարեցնելու համար բարբարոսական գործողությունները, որոնք կարող են հանգեցնել անուղղելի կործանարար հետևանքների ամբողջ տարածաշրջանում»[2]: 1990թ. հունվարի սկզբին ազերիների զինված ջոկատների թիվը հասնում էր մի քանի հազարի: Լեռնային Դարաբաղի Ազգային խորհրդի նախագահությունը, հանդես գալով հայտարարությամբ նշում էր, որ Բաքվում կազմակերպվում է նոր Սումգայիթ: Խորհրդային և համաշխարհային հասարակայնությունից պահանջվում էր վճռականորեն դատապարտել ադրբեջանցիների միջնադարյան գազանությունները, որոնք կրկին հրեշավոր ոճիրներ են գործում ընդդեմ մարդկության[3]: Ադրբեջանի «ժողովրդական ազգային ճակատի» պարագլուխ Ա. Փանախովը և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա. Վեզիրովը հունվարի 13-ին հանդես գալով հեռուստատեսությամբ՝ ադրբեջանական ժողովրդին կոչ են անում հարձակում գործել Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի հայաբնակ բնակավայրերի վրա: Վեզիրովը նույնիսկ կոչ էր անում հակահայկական գործողություններն ավարտել մինչև հունվարի 16-ը[4]: Նրանց ելույթներից հետո Բաքվում սկսվեցին հայ ընտանիքների դեմ հարձակումներն ու բարբարոսությունները: Հունվարի 13-ին Բաքվի փողոցներում թափված էին կտտանքների ենթարկված տասնյակ հայերի դիակներ: Այդ օրվանից հալածանքները Բաքվում կազմակերպված ձև ընդունեցին: Քաղաքը պլանաչափ կերպով տուն առ տուն «մաքրվում էր հայերից»: Ընդ որում, ինչպես 2 տարի առաջ Սումգայիթում, անչափահասների և մեր կանանց բռնաբարություններ ու խոշտանգումներ էին կատարվում: Բաքու տանող ճանապարհները շրջափակված էին: Ով կենդանի էր մնում ուղարկում էր նավահանգիստ, որտեղ վերջնականապես կողոպտվում էր և նավով էվակուացվում հիմնականում դեպի Թուրքմենիա՝ Կրասնավոդսկ: Բաքվի հարյուրավոր փախստականներ իրենց տեղեկություններում հաստատում են, որ «ժողովրդական ճակատի» կողմից կազմակերպված ու ղեկավարվող հետապնդումներն ու ջարդերը ընթանում էին ըստ մի անփոփոխ սխեմայի, որը մշակել էին

[1] Տես Մելիք-Շահնազարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում խաղաղ բնակչության նկատմամբ, Եր., 1998 թ., էջ 40:
[2] Տես «Московский комсомолец», 2 марта 2006 г.:
[3] Տես Հ. Աբրահամյան. «Մարտնչող Արցախը 1917-2000» գիրք Գ, 1985-2000 Եր., էջ 199:
[4] Տես «Սովետական Ղարաբաղ», 16.01.1990 թ.:

կազմակերպիչները[1]: 10-20 ոճրագործներ ներխուժում էին մի բնակարան և սկսում տան տերերին տեռորի ենթարկել, ծեծել ու տանջել, այնուհետև երևում էին «ժողովրդական ճակատի» ներկայացուցիչները, որոնք ահաբեկված հայերին առաջարկում էին անհապաղ գնալ նավահանգիստ: Նրանց թույլատրվում էր իրենց հետ ծանրոց վերցնել, սակայն խլվում էին ամբողջ կանխիկ դրամը, խնայողական գրքույկները և արժեքավոր իրերը: Նավահանգստում տեղակայված էր «ժողովրդական ճակատի» մի պահակակետ: Փախստականներն այստեղ դարձյալ խուզարկվում էին, երբեմն նորից ենթարկվում ծեծի: Այդ օրերին Բաքվի ոստիկանության հավաքական դիմանկարի բնորոշ գիծը հետաքրքրական և միաժամանակ սարսափեցնող ներկայացրեց ԱԺՃ-ի առաջնորդներից մեկը՝ Է. Մամեդովը Մոսկվայի մամլո ասուլիսի ժամանակ: «Ես անձամբ վկա էի, երբ երկաթուղու կայարանից ոչ հեռու սպանեցին 2 հայի: Հավաքվել էր ամբոխը, նրանց վրա լցրեցին բենզին և այրեցին, իսկ 200 մ հեռու գտնվում էր Նամինիսյան շրջանի ոստիկանական բաժանմունքը և այնտեղ կային ներքին զորքերի մոտ 400-500 զինվոր, որոնք մեքենայով 20 մ վրա անցան այդ ածխացած դիակների մոտով և ոչ ոք փորձ չարեց ցրել ամբոխը»[2]: Այդ բոլոր մանրամասն պլանավորված ստոր գործողությունները առավել արդյունավետ անցկացնելու նպատակով կազմավորվել էին նաև իրավապահ մարմինների, «շտապ օգնության», բնակկենցաղային ծառայության հանցագործ խմբեր, որոնք գործում էին միասնաբար: Մահամերձ ծեծվածը համարվում էր կենցաղային վնասվածք ստացած, փշրված ձեռքերով ու ոտքերով, ջարդված կողերով արյունլվիկ դեմքով մարդը մահանում էր սիրտանոթային անբավարարվածությունից ըստ տրված մահվան վկայականի[3]: Սպանդ, կոտորածներ և ջարդեր... պատշգամբներից նետվող մարդիկ և մոխրացած դիակներ կամուրջներին: Ահա սա է 1990 թ. հունվարյան ջարդերի օրերի Բաքուն:

Բաքվի հայկական ջարդերի պատկերը առավել ակնհայտ երևում է այդ օրերի պարբերական մամուլի էջերից: «Զանգվածային անկարգությունների գծով քրեական գործեր հարուցած կարճ ու կտրուկ որոշումներում կարդում ենք. 1990 թ. հունվարի 13-ին, ժամը 17.00-ից հետո Լենինի անվան հրապարակի միտինգից դուրս եկած մոտ 50 հազար մարդ բաժանվելով խմբերի կատարեցին ջարդեր, ավերածություններ, հրկիզումներ, բռնություններ և սպանություններ: Այն Ի՞նչ անանուն ամբոխ է կոտորել և դիակապտությամբ զբաղվել, բռնաբարել և սպանել ծերերին: Եզրակացություններ անելը դեռ շուտ է, չնայած արդեն այսօր աչքի է զարնում մի հանգամանք, որ բռնվածների մեջ չկա ոչ մի բաքվեցի, նրանք բոլորն էլ Հայաստանի, ԼՂԻՄ-ի կամ Նախիջևանի շրջաններից են»: Հունվարի 15-ին հայերի ջարդերը և հարձակումները նրանց վրա շարունակվում են, իսկ ամբողջությամբ վերցված վերջին երեք օրերում նախնական տվյալներով զոհվել են 43 մարդ՝ հայեր: Սակայն այդ թիվը չի կարելի վերջնական համարել, որովհետև Բաքվում դեռևս չեն ստուգվել բոլոր այն բնակարանները, որտեղ եղել են ջարդարարները: Հունվարի 16-ին Բաքվում բացահայտվել են հայերի 64 կողոպտված բնակարաններ: Հանրապետության մայրաքաղաքի Լենինյան շրջանում հայտնաբերվել են 4 ածխացած դիակներ, որոնք առայժմ ճանաչված չեն: Անցած օրվա ընթացքում արձակվել են 30 հայ պատանդներ: Հունվարի 17-ին Բաքվում կատարվել են 45 բնակելի տների կողոպուտ ու հրկիզում: Այդ հունվարյան օրերին ով կարող էր անտարբեր նայել, օրինակ, երբ Բաքվում հայկական ջարդերից գազազած ամբոխը բառիս բուն իմաստով մարդուն կտոր-կտոր է արել և նրա մնացորդները նետել աղբարկղ[4]: Հունվարի 15-ին, երբ շարունակվում էին հայկական ջարդերը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը փոխանակ ըն¬դունելու արտակարգ դրություն հայտարարելու որոշում, ընդունում է «ԼՂԻՄ-ում և մի քանի այլ շրջաններում արտակարգ դրություն հայտարարելու որոշում»: Արտակարգ դրություն է մտցվում ԼՂԻՄ-ում, նրա սահմանակից շրջաններում: Մինչդեռ Բաքվում արտակարգ դրություն է հայտարարվում միայն հունվարի 18-ին, երբ հայկական ջարդերն ըստ էության ավարտվել և մայրաքաղաքում հայեր չէին մնացել: Մոսկվան հայկական ջարդերն օգտագործելով որպես պատրվակ՝ զորքեր է մտցնում Բաքու՝ ջախջախելու իշխանության ձգտող ժո¬ղովրդական ճակատը: Մեկ շաբաթ շարունակ երկրի պաշտոնական լրատվական միջոցները սկզբում թաքցնում,

[1] Տես նույն տեղում 18.01.1990 թ.:
[2] Տես Ի. Մոսեսովա, Ա. Հովնանյան, Բաքվի ջարդերը 18-20 և Թաթուլ Հակոբյան, Կանաչ ու սեվ, Արցախյան օրագիր, Երևան, 2008, էջ 93-96:
[3] Տես նույն տեղում, էջ 20:
[4] Տես նույն տեղում, էջ 32:

ապա՝ կցկտուր տեղեկություններ էին հաղորդում հայերի ցեղասպանության մասին: Բանակը Բաքու մտավ մեկ շաբաթ ուշացումով: Հնարավոր է, որ բանակը Բաքու չմտներ, եթե թուրքերը չհարձակվեին քաղաքի ռուս ազգաբնակչության, զինվորական զորամասերի վրա և եթե անմիջական վտանգ չսպառնար խորհրդային կարգերին Ադրբեջանում: Այս անգամ նույնպես պաշտոնական լրատվական միջոցները փորձեցին կոծկել հայության սպանդը և հայտարարեցին, որ զոհվել են 100-ից ավելի հայեր: Խորհրդային զորքերը դիվիզիայի հրամանատար Ալեքսանդր Լեբեդի գլխավորությամբ Բաքու են մտնում հունվարի 20-ին: Սպանվում են 130 ցուցարարներ և գրոհայիններ: Պատահական չէ, որ 1990 թ, Բաքվի հունվարյան դեպքերը իրենց արտացոլումն էին գտել ՄԱԿ-ի «Կանանց դեմ խտրականության վերացման» հարցերով զբաղվող հանձնաժողովի 17-րդ նիստում հայկական պատվիրակության կողմից ներկայացված զեկույցում (1907թ. հուլիսի 17-ից 25-ը), որում ասվում էր. «1990 թ. հունվարին Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում հայ համայնքի ներկայացուցիչները 7 օր շարունակ սպանվում, թալանվում և ստորացման էին ենթարկվում: Հղի կանայք և երեխաները ենթարկվում էին անասելի խոշտանգումների»: Աղջիկներին բռնաբարում էին ծնողների աչքի առաջ, նրանց մեջքին խաչ էին խարանում: Նման վերաբերմունքի պատճառը նրանց ազգությունն էր և քրիստոնեական հավատը: Համաձայն ցեղասպանության մասին 1948 թ. ՄԱԿ-ի կոնվենցիայի հեղինակ Ռաֆայել Լեմկինի կողմից ցեղասպանություն բառին տրված ձևակերպմանը՝ ցեղասպանությունը որևէ էթնիկ կամ կրոնական խմբի հետևողական և նպատակադրված ոչնչացումն է: Պարտադիր չէ, որ այս ոչնչացումը արտահայտվի բացառապես զանգվածային սպանություններով, այն կարող է ուղեկցվել համակցված գործողություններով: Ցեղասպանությունը ուղղված է ազգային խմբի՝ որպես մի ամբողջական միավորի դեմ, նրա ներկայացուցիչների դեմ: Եթե բառի այս բացատրությունը վերագրենք Ադրբեջանում ապրող հայերին, կնկատենք, որ 20-րդ դարի ընթացքում ադրբեջանական շովինիստական կուսակցությունները 3 անգամ' 1909, 1918 և 1990 թ., համախմբված ցեղասպանության փորձ են կատարել մայրաքաղաք Բաքվում բնակվող հայ էթնիկ խմբի նկատմամբ:

Փաստորեն ադրբեջանական ջարդարարների պանթուրքական քաղաքականության կիրառումով ոչնչացվում էր հայությունը: Հայտնի է, որ 1990 թ. հունվարյան ջարդերը Բաքվում հայերի էթնիկ զտումների վերջին ալիքն էր, որոնց սկիզբը դրվել էր դեռ 1905 թ.: Այդ իսկ պատճառով Բաքուն հաճախ կոչում էին 3 ջարդերի քաղաք: Ըստ էության այս վերջին ջարդը Հարավային Կովկասի տարածաշրջանում հայերի նկատմամբ իրականացվող թուրքական քաղաքականության ժառանգությունն էր, որ օսմանյան Թուրքիան օգտագործել էր արևմտահայության, իսկ քեմալական Թուրքիան նաև արևելահայության նկատմամբ: Ակնհայտ է 1905 թ., 1918 թ. և 1990 թ. Բաքվի հայերի կոտորածների միջև եղած կապը: Ճիշտ է, առաջինը որոշ առումով տարբերվում է վերջին 2-ից, բայց դրանք փոխկապակցված են նրանով, որ շղթայի նույն օղակներն են, ուր գործում է ցեղասպանության նույն սցենարը իր բոլոր կողմերով: 1905 թ. փետրվարից մինչև 1906 թ. հուլիսն ընկած ժամանակահատվածի իրադարձությունները ընդունված է անվանել հայ-թաթարական պատերազմ: Այդ ժամանակ արդյունաբերական բազմազգ քաղաք Բաքվում, որտեղ բնակվում էին նաև մեծ թվով հայեր, հայերի տները հրաճարակ դարձան, հայերը կոտորածի էին ենթարկվում, հալածվում: Այս գործողությունները մասամբ առաջնորդվում էին տեղական ու տարածքային իշխանությունների սադրանքներով, խուզարկություններով, ոճրագործներին հովանավորելով: Շատ հաճախ երիտթուրք պարագլուխների, պանթուրքական գաղափարներով տարված մարդկանց, նրանց անմիջական ազդեցությամբ ու խորհուրդներով էին կազմակերպում հայերի, այսպես կոչված, էթնիկ զտումները Բաքվում: Շատ ընդհանրություններ կան 1918 և 1990 թթ. Բաքվի հայերի ջարդերի միջև, որտեղ ակնհայտ էր կապը մուսավաթական կուսակցության և Ադրբեջանի կոմկուսի ու նրա հովանավորությամբ գործող ազգային ժողովրդական ճակատի միջև: Գրեթե նույն անզուսպ խրախճանքը, ջարդերն ու բռնությունները, անիշխանությունը, որ տիրում էին Բաքվում 1918 թ, ջարդերի նախօրյակին, գրեթե նույնն էին նաև 1990-ի հունվարյան ջարդերի նախօրյակին: նույն համամասնություններն ու զուգորդություններն են 1918 թ. սեպտեմբերյան երեք օրերի և 1990 թ. հունվարի 13-ից Բաքվում կատարված դեպքերի ժամանակ: Արյունալի դեպքերը կրկնվում էին նույն սցենարով, իսկ կազմակերպիչների երեսապաշտությունը արտահայտվում էր գրեթե նույն բառերով: Մուսավաթական կուսակցության ղեկավարը ջարդերի ու կոտորածների հաջորդ օրը դիմում է բնակչությանը՝ հավաստում էր, որ անկախ հավատքից ու ազգային պատկանելիությունից՝ Ադրբեջանում բնակվող բոլոր քաղաքացիները պետք է օգտվեն կառավարության հավասար

վերաբերմունքից: Նույնը կրկնում էր 72 տարի անց 1990 թ. մայիսի 17-ին Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քարտուղար Ա. Մութալիբովը՝ հայտարարելով, որ Ադրբեջանը նրա բնակիչների համար եղել է և կլինի հարազատ տուն, որը կպաշտպանվի նաև հետագայում: 1918 թ. Բաքվի ջարդերը /գրեթե չէին տարբերվում Արևմտյան և Արևելյան Հայաստանում, Ադրբեջանի շրջաններում կատարվող ցեղասպանությունից: Բաքվի հայության եղեռնագործությանը զոհ գնացին 30 հազար մարդ: Այն իրականացվեց թուրքական ներխուժման հետևանքով և տեղի մուսաֆաթական կուսակցության նախաձեռնությամբ: Բաքվի Հայոց ազգային խորհրդի տվյալներով մինչև 1918 թ. սեպտեմբերյան ջարդերը 88673 հայերից տուժել է 52822-ը, որը կազմում է ընդհանուր թվի 59.57%-ը: Նրանցից 5248-ը զոհվել են, 3572-ը՝ անհետ կորել, 3396-ը գերվել, 253-ը՝ ձերբակալվել, 31293-ը՝ դարձել գաղթականներ, 288-ը՝ բռնաբարվե[1]լ:

Շուտով թուրքերին Անդրկովկասում փոխարինելու եկան անգլիացիները, որոնք առաջնորդվելով իրենց քաղաքական ու տնտեսական շահերով, պաշտպանության տակ վերցրեցին Ադրբեջանը: Փաստորեն 1918 թ. Բաքվի հայկական կոտորածների կազմակերպիչներն ու ոգեշնչողներն էին թուրքական զորքերի հրամանատարներ Նուրի և Մուրսալ փաշաները, Ադրբեջանի ղեկավարներ Ֆ. Խան-Խոյսկին և Ջևանշիր Խանը: Նրանք առևանգում, բռնանում, թալանում ու կողոպտում էին հայ բնակչությանը: Նշված երեք ցեղասպանություններից հատկապես երրորդի մեջ իր մեղքի բաժինն ունի ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությունը, որը չկանխեց և գրեթե ոչ մի միջոց ձեռք չառավ հայությանը փրկելու[2]: Զորքերը միշտ հայտնվում էին այն պահին, երբ մոլեռանդ ամբոխը ավարտել էր իր գործը: Անհեթեթ հայտարարությունները չէին կարող չծնել նոր հանցագործություններ, դեռ ավելին, սկսած 1991 թ. ապրիլի 30-ից՝ 3 ամիս շարունակ պետությունն ինքը զինված ուժերի միջոցով իրականացրեց հայության բռնագաղթը Գետաշենի շրջանում, Շահումյանում ու Արցախի մյուս շրջաններում: 24 հայկական գյուղեր հայաթափվեցին, զոհվեցին շատ մարդիկ: Դա արդեն ագրեսիա էր պետության կողմից:

Ներկայիս հայ-ադրբեջանական պատմության իրողությունը շատ հեռու է թվում Ադրբեջանի կողմից լայն տարածում գտած պետական մոտեցումներից: Պետության և ԶԼՄ-ների կողմից հայ-ադրբեջանական հարաբերությունների վերաբերյալ հետևյալ ընկալումն է ստեղծվել, թե իբր հայերը դաժան հանցագործներ են և զավթիչներ, իսկ ադրբեջանցիները անմեղ զոհեր:

Այսպիսով, ընդհանրացնելով ուսումնասիրության արդյունքները անհրաժեշտ ենք համարում տալ կատարված դեպքերի իրավաքաղաքական գնահատականը:

1. Հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում հանդիսանում էր Թուրքիայում արևմտահայության ցեղասպանության շարունակությունը:

2. Հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում կրել է շարունակական բնույթ և սպիտակ գենոցիդի հետ մեկտեղ շարունակվել է ավելի քան 85 տարի:

3. Ցեղասպանության կազմակերպիչ են հանդիսացել Ադրբեջանի մուսավաթական, ապա նաև կոմունիստական կառավարությունները: Հայության ցեղասպանությունը Ադրբեջանում իրականացվեց պանթուրքիզմի կարգախոսների ներքո:

4. Այդ հրեշավոր իրադարձությունները ազդանշան էին միջազգային հանրությանը, որ Հարավային Կովկասում երբևէ չի կարող հաստատվել արդար և կայուն խաղաղություն, քանի դեռ պատասխանատվության չեն ենթարկվել 1988, 1990 թթ. Ադրբեջանում և ԼՂ-ում հայերի ցեղասպանության կազմակերպիչներն ու իրականացնողները: Այդ մասին պետք է իմանան բոլոր նրանք, ովքեր այսօր հովանավորում են Ադրբեջանին՝ ԼՂՀ-ի հետ կապված հարցերում, գրգռում են նրա ղեկավարների ախորժակը և խրախուսում Հարավային Կովկասի տարածաշրջանում ցեղասպանության նոր գործողություններ կազմակերպելու:

5. Միաժամանակ ԼՂՀ-ի կայացման զուգահեռ՝ ընթանում են միջազգային կազմակերպությունների և գեր տերությունների մասնակցությամբ բանակցություններ, որոնց մասնակցում է նաև Ադրբեջանը, այն դեպքում, եթե Ադրբեջանը ցեղասպան պետություն ճանաչվի՝ միջազգային օրենսդրությամբ ընդհանրապես կզրկվի բանակցություններին՝ մասնակցելու իրավունքից, և օրակարգից դուրս կգան նրա անօրինական նկրտումները ԼՂՀ-ի նկատմամբ:

[1] Տես Ի. Մոսեսովա, Ա. Հովնանյան, Բաքվի ջարդերը էջ 35:
[2] Տես Թ. Հակոբյան, Կանաչ ու սեվ, Արցախյան օրագիր, ստեփանակերտ, 2008 թ., էջ 99:

6. Այսօր խիստ կարևոր է Ադրբեջանին պատասխանատվության կանչելը և միջազգային հանրության պահանջով նրանից նախկին ադրբեջանահայությանը հասցված նյութական ու բարոյական վնասի լիարժեք փոխհատուցում պահանջելը: Սա կարևոր հիմնախնդիր է: Դժբախտաբար մինչև օրս Ադրբեջանում հայերի նկատմամբ ցեղասպանությունը չի հաջողվել ներկայացնել համարժեք կերպով: Հայաստանի այն ժամանակվա իշխանությունները, խնդիրը լավ չպատկերացնեով, չկարողացան այն լավագույնս ներկայացնել միջազգային հանրությանը: Այսօր առկա են բազմաթիվ վավերագրեր, նյութեր, հրապարակված աշխատություններ, որոնք կարող են ապացուցել ցեղասպանության փաստերը: Դրա հիման վրա Ադրբեջանը պարտավոր է փոխհատուցել բռնագաղթված հայերին, քանի որ նրանք այնտեղին թողել մեծ ծավալի ունեցվածք, որը չի կարելի համեմատել Հայաստանից մեկնած ադրբեջանցիների ունեցվածքի հետ: Ընդ որում նրանք ստացել են համապատասխան փոխհատուցում և չեն ենթարկվել բռնի գործողությունների:

7. Փաստորեն հայերի հանդեպ վայրագությունները, որոնք կազմակերպվում էին Ադրբեջանի իշխանությունների կողմից 20-րդ դարի ընթացքում, կրկին ընդգծում են Արցախի ժողովրդի իրավացիությունը, որը պայքարի ելավ իր վաղնջական իրավունքների և ազատության պաշտպանության համար և հասավ անկախ հանրապետության ստեղծմանը: